հաստատելը, որ նա բնաւ չէ ծառայել ցարիզմի շահերին և ոչ էլ որևիցէ իմպերիալիզմի: Այժմ Թիւրքիայից է կախուած նոյն տեսակէտն իրապէս և գործնականապէս ընդունել՝ մշակելու համար մեզ հետ դրուած հարցերի համապատասխան մի համաձայնութիւն:

Հայաստանի կառավարութիւնը չի ղեկավարւում անցողական պայմաններով և ոչ օրւայ փոփոխական մթնոլորտով, այլ միայն բուռն ցանկութեամբ՝ ստեղծելու Տաճկաստանի հետ կայուն յարաբերութիւններ հաստատելու մի հող՝ մնալով հանդերձ կենսունակ մի պետութիւն:

Սպասելով ձեր անմիջական պատասխանին և ողևորուած բուռն ցանկութեամբ լուծելու հնարաւոր չափով շուտ և կատարելապէս վաղուց հասունացած հայ–թիւրքական յարաբերութիւնների հարցը, խնդրում եմ պ. կոմիսար, ընդունել ամենարարձր յարգանքներիս հաւաստիքը:

Արտաքին գործերի նախարար՝ Հ. Օհանջանեան

Այսպիսով, կարծես, բանակցութիւնները յաջող ընթացք էին ստանում և հաշտութեան հնարաւորութիւնը կարելի դառնում: Սակայն, նոյ մբեր 9–ին ստացանք մի նոր դիմում, որի բովանդակութիւնը հետևեալն է.

8 նոյեմբ., 1920 թ.

Հայկական բանակի հրամանատարութեան, հայկական

կառավարութեան

Հաշտութիւն խնդրելու առթիւ ուղարկած նոտան և ռազմական գործողութիւնները կանգնեցնելու մասին արած դիմումը Անգորայի իմ կառավարութեան յայտնելով, մինչև պատասխան ստացուելը աւելորդ արիւն չթափելու համար, փոխադարձաբար առաջարկւած պայմանները (7 նոյեմբ. 1920 թ.) ձեր բանակի կողմից գործադրուելուց անմիջապէս յետոյ, ռազմական գործողութիւնները դադարեցրի: Այս անդամ իմ կառավարութեան կողմից առաջարկւած զինադադարի պայմանները ստորև նոյնութեամբ արտադրում եմ: Սոյն պայմանը ամբողջապէս գործադրելով՝ իսկոյն հաշտութեան պատւիրակներին Ալեքսանդրապոլ ուղարկւելը խնդրելով՝ յայտնում եմ յարգանքներս՝ Ֆէրիդ Բեազիմ Կարաբեքիր:

Զինադադարի պայմանները: Առայժմ 24 ժամւայ ընթացքում Ալեքսանդրապոլում բոլորովին գործածելի վիճակում 2000 արագահարւած հրացան, սարքով և կենդանիներով միասին 20 հատ ծանր և 40 հատ թեթեւ գնդացիր, երեք մարտկոց թնդանօթ, 4000 ջորի, 1000 անդուկ հրացանային ռազմամթերք, 6000 թնդանօթի ռումբ, երկու շոգեմեքենայ և 50 վագոն պիտի յանձնւի մեզ: Կանոնաւոր և անկանոն հայկական զինուորական ուժերը Արփաչայի ընթացքը — Ալագեոզ կայարան, Կիրմիզլի — Կոլիջան, Նալբանդ կայարան — Վարանցովկա գծից արևելք պիտի ետ քաշւեն. այս գծից արևմուտք գտնւող երկաթուղագիծը չքանդւած և անվնաս պիտի թողնւի:

Երկրորդ՝ առ առաւելն 3 օրւայ ընթացքում դարձեալ կանոնաւոր և անկանոն հայկական զինւած ուժերը Սուրմալու–Արաքս կայարան — Կիզիլչի, Աբէթ—Ալագեոզ լերան լանջը — Տանագերմագ—Նովո–Միխայլովկա — Լոռիքենդ—Շերմուդ Եալանդաղ գծից արևելք պիտի քաշւեն:

Երրորդ՝ զինադադարի կնքումից անմիջապէս յետոյ Սանահին կայարանի և Ալեքսանդրապոլի միջև գծի վրա ամէն տեսակ ռազմական պիտոյքների փոխադրութիւնը պիտի կանգ առնի: Այս փոխադրութիւնները ստուգե-